Դղեակ Պայեզիտայ. — Le Chateau de Bayezid.

մէ Եփրատայ. բերդաւոր, այլ անշքացեալ վասն գաղթելոյ Հայոց: Յարեւմտից հիւսիսոյ նորա որպէս և Ալաստաղ լերին՝ ամառնայ երկայնանիստ դաշտաթամբ լեառն Նպատ, յորում յաղօթս կացեալ Մեծին Ներսիսի գիտէր զպատերազմն Հայոց և զյաղթութիւն ընդդէմ Պարսից 'ի Ձիրաւ դաշտի՝ որ ձգի ընդ մէջ Նահիէի և Տիառինայ. և յանուն նորին կայ ցարդ գեօղ մի յաջմէ Եփրատայ. և 'ի գագաթան լերինն մատրունք աղօթատեղիք Ներսիսի. 'ի հիւսիսային արեւելեան ստորոտս լերինն առ Եփրատ գետով կայր Բագաւան տեղի պաշտաման դից և հանդիսից, մերձ գոլով և 'ի Շահապիվան լեառն, զոր նուիրեաց Լուսաւորիչ՝ որոյ կարապետին, անդ մկրտեալ զՏրդատ արքայ բիւրուք աշխարհագումար բանակի նորին. և կանգնեաց եկեղեցի, որ այժմ կոչի Իւչ-Քիլիսէ, և է մի յանուանի ուխտատեղեաց Հայոց և 'ի հրաշակառոյց ընդարձակ տաճարաց, որ կանգնեցաւ օժանդակութեամբ Հերակլեայ կայսեր 'ի վերայ փոքու գրիգորաշէն եկեղեցւոյն յամին 634-9, և ցարդ կանգուն և չէն կայ և հիացուցանէ զանցօղս. քառորդաւ հեռի յելից վանացն կայ տեղի մկրտութեանն Հայոց, և խաչագրոշմք յոլովք փորեալք 'ի քարաժեռն առնթեր: — Ի հիւսիսակողման վիճակիս կայ լիճն Պալըքճիւլ փոքու կղզեկաւ, յորմէ ելանէ գետ համանուն և օժանդակէ զԵփրատն 'ի Նախջուան գաւառի:

86. Յելից Տիառինայ ընդ մէջ գաւառաց Ռուսաց և Պարսից և Բերկրոյ վիճակի Վանայ, կայ վիճակն կամ ընկէկ գաւառ ՊԱՅԷԶԻՏ, տարածեալ 'ի ԿՈԳԱՅՈՎԻՏ և 'ի ՄԱՍԵԱՑՈՏՆ հին գաւառս Այրարատայ: Գլխաւոր տեղի գաւառին է քաղաքն ՊԱՅԷԶԻՏ 'ի զառիվայրի քարալերին հայելով 'ի խոր անդունդս, ունի բերդ և գեղեցիկ ապարանս կուսակալի՝ 'ի բարձու երրու 6000'. բարգաւաճեալ է վաճառականութեամբ ընդ Պարսս, այլ անշքացեալ և նուաղեալ 'ի սակս պատերազմաց Ռուսաց յամին 1828, և յայսմ ևս ամի (1854), յորում Ռուսք դարձեալ տիրացան նմին հարեալ զՕսմանեանս բանակեալս առ քաղաքաւն, և առ վայր մի թողեալ՝ դարձեալ առին և սկսան ամրացուցանել զայն: — Ի հիւսիսոյ Պայէզիտայ կայ Զանկէտօր աւան. և 'ի նորին հիւսիսոյ յահեկէ Պալըգլը գետոյ Արծափ, որոյ անուանի էր բերդ 'ի հնումն. 'ի նմին կողման էր և Դարօյնից վանքն կամ Դարօյնք ուր Աշոտ իշխան յէ դարու շինեաց զմեծ տաճարն Ամենափրկչի, և եդ 'ի նմա զփրկչական պատկերն զբերեալն 'ի Կոստանդնուպօլսոյ, որ արդ պահի յԷջմիածին. բայց ոչ գիտեմ թէ մնայ ինչ 'ի տաճարէն:

Է. ՎԱՆ ՆԱՀԱՆԳ

87. ՎԱՆԱՅ կուսակալութիւն որ յերկրին Քրդաց բովանդակի, սահմանս ունի 'ի հիւսիսոյ զՊայէզիտ նահանգ, յարեւմտից զՄուշ, 'ի հարաւոյ զՔրդաստան ընդ մէջ Ճէզիրէ և Մուսուլ գաւառաց, յարեւելից